

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ
ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՎԱՆ-ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
1910-1917ԻՆ

ԱԻԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Արդուլ-համիդեան բռնապետութեան տապալումը եւ սահմանադրական կարգերի հաստատումը Օսմանեան կայսրութիւնում 1908ի երիտթուրքական յեղաշրջումից յետոյ բաւարար հնարաւորութիւններ ընձեռեցին արեւելագէտ-հայագէտներին՝ պատմա-հնագիտական, ազգագրական եւ բանասիրական հետազոտութիւններ կատարելու վանի նահանգի տարածքում:

1910-1911ին Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան¹ կողմից Վան-Վասպուրական է գործուղուում հայ նշանաւոր ազգագրագէտ, բանագէտ, հնագէտ, հայ գիտական ազգագրութեան հիմնադիր, Թիֆլիսի Ազգագրական Ընկերութեան վարիչ՝ Երուանդ Լալայեանը, որը մանրամասն տեղեկութիւններ է գրանցում տուեալ շրջանի պատմա-աշխարհագրական միջավայրի, տնտեսական կեանքի, ամուսնական, հարսանեաց, ծննդեան, թաղման եւ այլ սովորոյթների, ծէսերի, ինչպէս նաեւ հաւատալիքների, սնոտիապաշտութիւնների, ժողովրդական բժշկութեան եւն-ի մասին: Նրա նպատակն էր կազմել մի առանձին հատոր՝ նուիրուած Հայաստանի այդ հնագոյն նահանգի ազգագրութեանը: Միաժամանակ նա ձեռնարկում է գրել առանձին մի ուսումնասիրութիւն՝ նուիրուած Շատախին եւ Մոկսին: Այդ նպատակով, նոյն թուականին նա լինում է Հայոց Զորում, շրջում է նահանգի բոլոր գաւառներում ու վանքերում եւ հաւաքում մեծ քանակութեամբ ազգագրական հարուստ նիւթեր²: Լալայեանը ուսումնասիրում է նաեւ հին ձեռագրերը, կազմում դրանց ցուցակները: Ուղեւորութեան վերջում նա Վանի Շամիրամի թաղամասում կատարում է պեղումներ, յայտնաբերում նախապատմական շրջանի՝ քարի դարի յատուկ հնութիւններ³:

Այն, որ Լալայեանը մեծ հետաքրքրութիւն էր ցուցաբերում եւ կարեւորում Վանի նահանգի պատմա-մշակութային արժէքների ուսումնասիրումը, երեւում է Բաքուի Հայոց Բարեգործական Ընկերութեան գրադարանապետ Երուանդ Թաղիանոսեանին ուղղած իր նամակից, որտեղ նա նշում է. «Եթէ յաջողուի ինձ... այլեւս չեմ նստիլ Թիֆլիսում, կ'երթամ դարձեալ Վասպուրական... Որքա՛ն գործ կայ...»⁴:

Լալալաներ վան-Վասպուրականում կատարած իր գիտական հետազոտութիւնների ժամանակ մեծ օժանդակութիւն է ստանում Մոկսի կառավարիչ, ազգութեամբ քուրդ՝ Մուրթուլլա բէկից եւ նրա եղբորորդի Ալի բէկից, որոնց միջեւ ստեղծւում են ջերմ բարեկամական կապեր⁶ :

Այդ տարիներին Լալալաներ վան-Վասպուրականի մասին մի շարք արժէքաւոր աշխատութիւններ է տպագրում Ազգագրական Հանդէսում, իսկ այդ ամէնի հանրագումարն է լինում 1913ին հրատարակուած նրա «Վասպուրական-Ազգագրութիւն Վասպուրական, Նշանաւոր Վանքեր, Ա. Պրակ» վերտառութեամբ ուսումնասիրութիւնը⁷ :

Ընդհանրապէս Լալալաներ նախատեսել էր Վասպուրականի մասին աշխատութիւն հրատարակել մի քանի հատորով, սակայն դա նրան չի յաջողւում: Այն մնացել է անտիպ: Հրատարակուած աշխատութիւնը բաղկացած էր մի քանի մասերից՝ նուիրուած Վասպուրականի ազգագրութեանը, բանահիւսութեանը, ասորիներին, տնայնագործութեանը եւ նշանաւոր վանքերին: Վանի բարբառով նա հաւաքում եւ գրի է առնում «Մասնայ Տուն», «Ոստանայ Տուն Եւ Թլու-Դաուիթ», «Ռոստամէ Զար», «Աղեքսանդրի Կեսէն», «Ոսկէ Կանթեղ», «Ոսկէ Մամ», «Դալի Տոպան», «Խէք», «Նազիկ Պատան», «Քաւորանց Շունը», «Բլրուլ Կուշ» եւ բանահիւսական այլ ստեղծագործութիւններ:

Շատախի բարբառով նա թղթին է յանձնում «Այօ», «Կատուի Կուի», «Եոսէֆ», «Մմբատ Ու Մենեակ Թագաւորներ», «Թագաւոր», «Տիմար Մարդ», «Քուն-Քընքաւուս Թագաւոր», «Դիքին Խրատը», «Պառաւ Ու Աղուէս» եւ այլ ստեղծագործութիւններ:

Լալալաներ ձեռնամուխ է լինում վան-Վասպուրականի շուրջ 28 վանքերի եւ եկեղեցիների ուսումնասիրմանը: Նա անդրադառնում է ոչ միայն վանքերի նկարագրութեանը, այլեւ իրօսում է վանական ծէսերի մասին, տալիս է վանքերի եւ դրանց շրջակայ տապանաքարերի վրայի արձանագրութիւնների վերլուծութիւնը:

Վասպուրականի վերաբերեալ ուսումնասիրութիւնը մի ամբողջական եւ արժէքաւոր աշխատութիւն է, որն արդիւնք է հեղինակի մի քանի տարիների յամառ աշխատանքի⁸ :

Յետագայում, երբ Առաջին Աշխարհամարտի տարիներին արեւմտահայութեան դժնդակ բախտին արժանացան հայ ժողովրդի բազմադարեան հոգեւոր մշակոյթի գանձերը՝ վանքերը, եկեղեցիները, մատենադարանները եւ ձեռագիր մատեանները, Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութիւնը 1915ի Յունիսի 15ին լսելով Ընկերութեան քարտուղար Երուանդ Լալալանի զեկուցումը արժէքաւոր ձեռագրերի ոչնչացման մասին, նրա իսկ ղեկավարութեամբ վան ուղարկեց գիտական արշաւախումբ, որը ձեռնարկեց նիւթական մշակոյթի յուշարձանների ուսումնասիրութիւնը⁹ : Աշխատանքի կազմակերպումը դիւրացնելու եւ անցանկայի դժուարութիւնները շրջանցելու համար, Լալալաներ 1916 Օ-

գոստոսի 9ին խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ին, ուր մասնաւորապէս ասուած է. «Ամենախոնարհ խնդիր. Չերդ վեհափառութեան բարձր հովանաւորութեան ներքոյ ծաղկող Հայոց Ազգագրական ընկերութեան նախաձեռնութեամբ ցանկանալով կազմել Հայոց բոլոր վանքերի մանրամասն նկարագրութիւնը՝ պատմական յիշատակագրութիւնների եւ արձանագրութիւնների հետ միասին, ակնածօրէն խնդրում եմ Չերդ վեհափառութեան բարեհաճել տնօրինել, որ հայ վանահայրերը մասնաւորապէս եւ հայ հոգեւորականութիւնն ընդհանրապէս աջակցեն ինձ եւ թոյլ տան նկարագրելու եւ լուսանկարելու ինչպէս վանքերը, այնպէս եւ նրանց մէջ գտնուած սրբութիւններն ու ձեռագրերը:

Երուանդ Լալայեան»⁹

Լալայեանի 1916 Օգոստոսի 9ի խնդրագրին Կաթողիկոսական դիւանը տալիս է դրական պատասխան եւ նոյն ամսի 12ին, թիւ 1837 գրութեամբ Լալայեանին արտօնելով է հայկական բոլոր եկեղեցիներում կատարել իր կողմից նախատեսուած նկարագրութիւնները¹⁰:

Ցանկանալով լրացնել ու կորստից ազատել Վասպուրական նահանգի ազգագրութեանը վերաբերող նիւթերը, Լալայեանը որոշում է ճանապարհորդութիւն կատարել նաեւ այն վայրերում, ուր կային այդ ընդարձակ նահանգից դուրս եկած գաղթականական օջախներ: Այդ նպատակով նա լինում է Ալեքսանդրապոլում, Կարսում, Կաղզուանում, Երեւանում եւ Վաղարշապատում¹¹:

Լալայեանից յետոյ Վան է մեկնում նշանաւոր արեւելագէտ, հնագէտ, հասարակական գործիչ եւ գիտութեան կազմակերպիչ Յովսէփ Օրբելին:

Յովսէփ Օրբելին Պետերբուրգի Համալսարանի աւարտական դասարանում էր, երբ 1910 Սեպտեմբերի 22ին Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Պատմա-Բանասիրական Բաժանմունքի նիստում մեծանուն արեւելագէտ-հայագէտ Նիկոլայ Մառը առաջարկում է Վանի շրջան գործուղել մի մասնագէտի, որը կը կարողանար զբաղուել այնտեղի հնութիւններով եւ ձեռնամուխ լինել բարբառագիտական նիւթերի հաւաքմանը:

Մառի կարծիքով դա կարող էր լինել Օրբելին, որն ունակ էր կատարել «նախատեսուած աշխատանքի մի մասը՝ բարբառագիտականը, պատմա-բանասիրականը՝ ըստ սուրբ գրքի բնագրերի, հնագիտականը՝ ըստ քրիստոնէական հնութիւնների եւ հաշուետոտութիւն տալ մնացած մասերի նիւթերի վերաբերեալ...»¹²:

Մառի առաջարկութիւնն ընդունելով է: «1911թ. ամռանը, - ինչպէս Կարէն Իւզրաշեանն է նշում, - նա (Օրբելին - Ա.Յ.) մի ճանապարհոր-

դութիւն ձեռնարկեց, որն ամբողջ կեանքում տպատրուեց նրա յիշ-
դութեան մէջ եւ ազդեց նրա գիտական հայեացքների վրայ»¹³:

Օրբելին առանձնաշատուկ պատասխանատուութիւն էր ցուցաբե-
րում այդ ուղեւորութեանը: Մնողներին գրած իր 1910 Դեկտեմբերի 12ի
նամակում (որը պահոււմ է Պետերբուրգում՝ Յովսէփ Օրբելու անձնա-
կան արխիւում), նա նշում է. «Իհարկէ, ստիպուած եմ շատ պարապել
եւ պատրաստուել այդ ուղեւորութեանը, որովհետեւ ինչպէս իր պայ-
մաններով, այնպէս էլ ըստ իր էութեան դա շատ պատասխանատու
աշխատանք է»¹⁴:

1911ին Պետերբուրգի Համալսարանի Պատմա-Բանասիրական եւ Ա-
րեւելեան Լեզուների երկու Ֆակուլտետները յաջողութեամբ աւարտե-
լուց յետոյ, Օրբելին, որն ունէր արդէն հրատարակուած 9 աշխատու-
թիւն, մնում է Համալսարանի Հայ-Վրացական Բանահիւսութեան Ամբ-
իոնում:

Նոյն՝ 1911ի ամռան վերջին Պետերբուրգի Գիտութիւնների Ակա-
դեմիան Օրբելուն գործուղում է Արեւմտեան Հայաստան, գլխաւորա-
պէս Վանի վիլայէթ՝ նրա առջեւ խնդիր դնելով հետազօտել եւ նկարագ-
րել նահանգի հեթանոսական, քրիստոնէական եւ մահմեդական ճար-
տարապետական յուշարձանները, վիմագրութիւնը, ուսումնասիրել
հայկական բարբառներից մէկը եւ տեղեկութիւններ հասցնել վանական
մատենադարանների ձեռագրերի վերաբերեալ¹⁵:

1911 Յուլիսի 1ին Օրբելին կնոջ հետ միասին (որի ուղեւորութեանը
դէմ էր Մառը)¹⁶ Բաթումից մեկնում է Կ. Պոլիս եւ Տրապիզոնի, Բայ-
բուրդ/Բարբերդի, Էրզրումի եւ Ադիլջեւազ/Արծկէի վրայով Օգոստոսի
14ին հասնում Վան՝ որտեղ էլ վերջնականապէս որոշում է կենտրոնա-
նալ Մոկսի հայկական բնակչութեան բարբառի ուսումնասիրման վրայ:
Օրբելին ձիով ուղեւորւում է Մոկս եւ այնտեղ մնալով հինգ շաբաթ,
ձեռնամուխ է լինում Մոկսի հայերի բարբառին վերաբերող նիւթերի
հաւաքմանը եւ բարբառագիտական յատուկ բառարանի կազմմանը:
Շատ շուտով Օրբելին իր համար մշակեց գրառումների որոշակի մեթո-
դաբանութիւն: Առաջնահերթ խնդիր դարձաւ տառադարձութեան
մշակումը՝ տեղական բարբառի առանձնաշատուկութիւնները դիպուկ
արտացոլելու համար: Նիւթեր հաւաքելու նպատակով նա լինում է
Մոկսի 10 գիւղերում՝ Արինջ, Արնանց, Լիւլենց, Միպկանց, Կիարիզ,
Կիւմիր, Միպ, Լիջան, Յապանց եւ Խրէր:

Բառարանը բաղկացած էր ոչ-հաւասար երեք մասերից: «Բառա-
րան մտան առօրեայ կենցաղի բոլոր այն բառերն ու արտայայտու-
թիւնները, որոնք վերաբերում էին դաշտային աշխատանքներին, ար-
հեստներին, անասունների ու բոյսերի անուններին, մի խօսքով այն
ամէնին, ինչը կարելի էր տեսնել շուրջը... - նշում է Օրբելին եւ աւելաց-
նում, - ինձ արժեքատր ծառայութիւն մատուցեցին երեխաները, որոնք

իմ աշխատանքը իրենց համար դիտում էին որպէս զուարճալիք եւ ամէն րոպէ վագում էին հարցնելու, ես գրե՞լ եմ արդեօք այս կամ այն բառը, թէ՞ ոչ»¹⁷։ Այդ ցուցակում տեղ էին գտել նաեւ մեծ դժուարութեամբ ձեռք բերուած, Ոզիմ եւ Արնանց գիւղերում գրի առնուած շուրջ 200 բառեր լրուտների (թաղիքագործների եւ բուրդ գզողների) գաղտնի լեզուից, որոնք ապրում էին Մոկսի մի քանի շրջաններում եւ ամէն աշուն մեկնում էին աշխատելու։ Ընդհանուր առմամբ Օրբելուն յաջողուեց հաւաքել Մոկսի բարբառի շուրջ 4500 բառեր։ Նրան յաջողուեց կազմել նաեւ աւելի քան հարիւր անունների հոլովման յատուկ աղիւսակներ եւ աւելի քան քառասուն բայերի խոնարհման ցանկեր։

Մոկսի բարբառի բառարանը, հնչոյթային եւ ձեւաբանական որոշակի յատկանիշների առանձնացումը, ինչպէս նաեւ բանասիրական, բանագիտական եւ այլ կարգի նիւթերը, հաւաքուած եւ ինչ-որ չափով դասակարգուած էին երիտասարդական աւիւնով լցուած ներհուն հետազօտողի, յետագայում համաշխարհային ճանաչում ստացած գիտնականի ձեռքով։ Այսօր այդ նիւթերը գրեթէ անփոխարինելի եւ շատ կողմերով վստահելի տուեալներ կարող են տրամադրել ոչ միայն ստոյգ այդ բարբառի, այլեւ առհասարակ հայերէնի բարբառների գիտական աւելի լայն, նոր սկզբունքներով ուսումնասիրութեան համար¹⁸։

Այսպէս, առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում այդ բարբառի ձայնաւորների, երկբարբառների եւ բաղաձայների համակարգերը, որոնք ի յայտ են բերում ոչ միայն հնչիւնախօսական, այլեւ առհասարակ հնչիւնաբանական որոշակի առանձնայատկութիւններ՝ կապուած այսպէս կոչուած քմայնացման (աւանդական բնութագրումով՝ հասկանալի եւ սովորական, մէկ այլ դէպքում՝ դեռեւս ոչ-այնքան պարզ, ուստի եւ արտասովոր), տարբերակիչ այլ յատկանիշների պարունակման, արտասանական տարբերակման եւ այլ երեւոյթների հետ¹⁹։ Օրբելին ժամանակին կարողացել է ըստ ամենայնի մանրամասն եւ ճիշտ գրանցել բարբառի հնչիւնական-հնչիւնաբանական երեւոյթները՝ արտասանական տարբերութիւնները, վերջիններիս նրբերանգները եւն-, սակայն այդպէս էլ չի կարողացել գիտական վերջնական տեսքի բերել հնչիւնական գրանցումների տառադարձման համակարգը։

Յայտնի է, որ Մառի նախաձեռնութեամբ 1914-15ին երկու անգամ որոշուում է տպագրել այդ բառարանը, սակայն հարցը մնում է անհետեւանք։ Միայն 2002ին ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտը՝ Պարոյր Մուրադեանի աշխատասիրութեամբ հրատարակում է այն²⁰։

Օրբելին միաժամանակ ծանօթանում է Մոկսի հայերի բանահիւսութեանը եւ գրի առնում բազմաթիւ բանահիւսական նիւթեր (10 առակ, 32 ծիծաղելի պատմուածք, 10 հեքիաթ, 2 բալլադ, 7 երգ, 5 ոտանաւոր, 163 ասոյթ, 51 հանելուկ), որոնց մէջ Մոկսի «բաղաքացիները» հումորով

(երբեմն բաւականին թունոտ) են արտայայտուում «գիւղացիների» բարքերի մասին²¹ :

Օրբելին հնարաւորութիւն չի ունենում հնագիտական լուրջ պեղումներ կատարելու, քանի որ ո՛չ միջոցներ ունէր եւ ո՛չ էլ թոյլտուութիւն՝ Օսմանեան կառավարութիւնից: Նա միայն հետախուզական աշխատանքներ եւ ոչ-մեծ հնագիտական պեղումներ է կատարում ուրարտական բնակավայր Թոփրակ կալէում, որտեղ դրանից ոչ-շատ առաջ աշխատել էր գերմանացի հնագէտ Վ. Բելքը: Պեղումների ժամանակ նա յայտնաբերում է խճանկար եւ փորագրուած մարմարի Փրիզի բեկորներ՝ կենդանիների (ցուլերի) ու ծառերի խմբանկարի պատկերներով²², որոնք յետագայում Բ. Վ. Ֆարմակովսկուն հնարաւորութիւն տուեցին ենթադրելու, որ գոյութիւն է ունեցել հնագիտական մշակութային կապ առաջաւորասիական՝ խեթա-վանեան աշխարհի եւ Հիւսիսային Կովկասի ու Հարաւային Ռուսաստանի միջեւ²³ :

Բացի դրանից, Օրբելին տեղական բնակիչներից եւ հնավաճառներից՝ (անթիքաջիներից) ձեռք բերեց շատ առարկաներ՝ գրիֆոնի (առիւծի մարմնով, արծուի թեւերով, առիւծի կամ արծուի գլխով առասպելական կենդանու) պատկերով փոքրիկ կնիք, սեպաձեւ արձանագրութեամբ կարասի եւ քարէ արձանիկի բեկորներ, ուրարտական նետերի բրոնզէ եւ երկաթէ սլաքներ, ուլունքներ եւն²⁴ :

Յովսէփ Օրբելու հետազոտութիւնները ծառայեցին որպէս հիմք Մոկսի նիւթերի՝ Մոկսի ազգագրական ակնարկի հրատարակման առթիւ գրուած շատ հետաքրքիր ներածական յօդուածի համար²⁵ : Երկրամասի բնակչութեան ազգագրական շատ սովորութիւններ եւ կենցաղը հնագոյն ծագում ունէին: Այսպէս, ե՛ւ Մոկս քաղաքում, ե՛ւ Չեւաստան (Մվստան) գիւղում Օրբելին կարողացաւ դիտել հսկայական սալերից պատրաստուած շինութիւններ, որոնց ներսում միշտ առկայ էին կարծր քարից պատրաստուած հսկայական անիւներ, որոնց չըջագծի եզրերը գլորուելուց ստացել էին սեղանաձեւ հատուածի տեսք: Դրանք ձիթհաններ էին, որոնք միեւնոյն ժամանակ կարող էին ծառայել որպէս դինգ՝ հացահատիկը թեփահան անելու սարած՝ վարսանդ: Այդպիսի անիւներ յայտնաբերուել էին Անիում եւ Մրէնում, իսկ աւելի ուշ՝ 1936ին, Յովսէփ Օրբելին դրանցից յայտնաբերեց Ամբերդ ամրոցի պեղումների ժամանակ: Սակայն տարբերութիւնն այն էր, որ միայն Մոկսում նա դրանք տեսաւ իրական գործողութեան մէջ²⁶ :

Չմեռն անցկացնելով վանում, 1912ի գարնանը, ճանապարհները բացուելուն պէս, Օրբելին կրկին ուղեւորուեց Մոկս: Հիմնականում աւարտելով Մոկսի բարբառի ուսումնասիրութիւնը, Օրբելին աղերաններ գտաւ այդ բարբառի եւ քրդերէն լեզուի միջեւ: Այդ էր պատճառը, որ երկրորդ ուղեւորութեան ժամանակ, որը սկսում է 1912 Ապրիլին եւ տեւում 10 շաբաթ, Օրբելին ուսումնասիրում է Մոկսի քրդերի լեզուն եւ

ազգագրութիւնը: Մոկսում նրան հիւրընկալում է Մուրթուլլա բէկը: Ինչպէս նշում է Վանի ռուսական փոխհիւպատոս Ս. Օլֆերելը, Մուրթուլլա բէկի տանը Օրբելին ընդունում է ջերմութեամբ: Նրա համար ստեղծում են հնարաւոր բոլոր պայմանները, որպէսզի նա կարողանայ զբաղուել իր հետազոտութեամբ: Խօսելով Մուրթուլլա բէկի հայաստանութեան մասին, Օրբելին գրում է. «Մուրթուլլա բէկը մի առանձնայատուկ մարդ է, կիրք, բարի, լայնախոհութեան տիպար: Նա խօսում է լաւ հայերէնով եւ բարեկամական, անշահադիտական կրթով է մօտենում հայերին... Նա բաւականին կրթուած, շատ կարդացած անձնատրութիւն է եւ հետաքրքրում է բոլոր հարցերով: Նա հազիւ 50 տարեկան կը լինի: Նայելով նրան, ես ատելի եմ համոզում, որ քրդերի ներքին աշխարհը շատ հարուստ է, եւ եթէ կառավարութեան կողմից մի փոքր հոգատարութիւն լինի, նա շատ արագ առաջ կ'ընթանայ եւ անտարակոյս կ'անցնի թուրք ֆանատիկից»²⁷:

Անդրադառնալով հայ-քրդական յարաբերութիւններին եւ Մուրթուլլա բէկի գործունէութեանը, Օրբելին 1911 Սեպտեմբերին իր ծնողներին գրած նամակում նշում է. «Ապրում եմ քրդական բէկերից մէկի տանը, այն մարդու տանը, որ հայկական կոտորածների ժամանակ եղել է հայերի պաշտպանը, նա ունի ռուսական կողմնորոշում: Ես շատ հագուագիտ եմ հանդիպել մի այդպիսի հաճելի, սիրուն ծերուկի: Գլխատրն այն է, որ նա մեծ քաղաքավարութեան տէր մարդ է, չնայած որ Վանից այն կողմ չի գնացել: Նա շատ սիրալիր է իմ նկատմամբ»²⁸:

Երեք ամիս ապրելով Մուրթուլլա բէկի տանը, Օրբելին հնարաւորութիւն է ունենում հետեւել քրդերի ամէնօրեայ կեանքին, նրանց բարքերին, սովորութիւններին եւ ծէսերին:

Մուրթուլլա բէկի տանը գիտնականը ուշադրութիւն դարձրեց քառակուսի հարթ բարձերին, որոնք ըստ հուսկան փափուկ ներքնակներ էին: Երեկոյեան տան տիրոջն էին այցելում շատ հիւրեր՝ քրդեր ու հայեր եւ Օրբելին տեսնում էր, թէ ինչպէս են այդ բարձերը դրւում յատակին եւ ինչպէս էին պատուաւոր հիւրերը նստում դրանց վրայ: Առաւել մեծանունը կարող էր ստանալ երկրորդ բարձը: Այդ բարձերը դրւում էին մեհմանդարի (հիւրընկալի) կողմից, ընդ որում, մի դէպքում տանտէրն էր նշան տալիս, իսկ միւս դէպքում մեհմանդարն էր բերում բարձերը՝ չսպասելով նշանի: Այն բարձերը, որոնք նախատեսուած էին ամենապատուաւոր հիւրերի համար, տանտէրը մատով շօշափում էր: Հիւրերը յատակին էին նստում ըստ աւագութեան ու անուանիութեան, եւ դա շատ էր յիշեցնում աստիճանակարգութեան այն սովորութիւնը, որը գոյութիւն ունէր ինչպէ՛ս պարսկական, այնպէ՛ս էլ հայկական թագաւորական արքունիքներում²⁹:

Օրբելու գործուղման հիմնական նպատակներից էր ծանօթանալ Մոկսի քրդերի բարբառին, կազմել քուրդ-ուսուերէն բառարան եւ քրդերէն լեզուի քերականութիւն: Երեք ամիս Մոկսում նա զբաղւում է այդ հարցերով, սակայն, ժամանակի բերումով, չի աւարտում այդ աշխատանքը: Այս անգամ Մուրթուլլա բէկը իր բարեկամին՝ Ալի աղային ուղարկում է Վան, որպէսզի տեղում օգնի Օրբելուն՝ իր քրդագիտական աշխատանքներն աւարտելու գործում: Ազատ տիրապետելով հայերէնին եւ ծանօթ լինելով քրդական ժողովրդական բանահիւսութեանը, Ալի աղան ամէն կերպ աջակցում է Օրբելուն, եւ երբ վերջինս իր կնոջ հետ մեկնում է արձակուրդի, նրանց ուղեկցում է Թիֆլիս եւ մնում Օրբելու տանը: Այս կապակցութեամբ Օրբելին գրում է. «Ես Մոկսում մի քանի մարդկանց անմիջական օգնութեամբ զբաղուեցի քրդերէնի ուսումնասիրութեամբ, յատկապէս ինձ օգնել է Ալի աղան՝ Եուսուֆի տղան: Ալի աղան բացարձակ տիրապետում էր տեղի հայկական բարբառին»³⁰:

Օրբելուն յաջողւում է գրառել մի հատուած քրդական «Մամ Եւ Զին» պոէմից եւ կազմել երեք մասից բաղկացած 434 էջանոց քուրդ-ուսուերէն եւ ուս-քրդերէն բարբառագիտական բառարան, որը գիտական լուրջ ուսումնասիրութիւնների արդիւնք էր³¹:

Բառարանը կազմելիս Օրբելին օգտւում է մի շարք աշխատութիւններից, որի մասին նա գրում է. «Այս բառարանը կազմելիս օգտուել եմ Ժարայի, Եուսուի, Եղիազարովի աշխատութիւններից...»³²:

Այսօր Օրբելու անձնական արխիւում պահւում են անտիպ նիւթեր Մոկսի քրդական եւ հայկական բարբառագիտութեան վերաբերեալ³³:

1911-1912ին Օրբելին զբաղւում է նաեւ հայ միջնադարեան ճարտարապետութեան խնդիրներով՝ ուսումնասիրելով Աղթամարի Մ. Խաչ եկեղեցին եւ նրա բարձրաքանդակները, Արծրունիների արքունական պալատը, Ոստան քաղաքը եւն.³⁴:

Այսպիսով, Օրբելին շուրջ մէկ տարի ուսումնասիրում է Մոկսից երկիրը Մոկսի հայերի եւ քրդերի կենդանի բարբառը, բանահիւսութիւնը եւ ազգագրութիւնը, Վանի բերդը, Թոփրակ Կալէն, Հայկաբերդը եւ Աղթամարի ճարտարապետական յուշարձանները: Այդ ամէնը յետագայում տեղ են գտնում նրա *Մոկսը Եւ Նրա Բնակիչները* աշխատութեան մէջ, որտեղ հեղինակը ներկայացնում է Մոկսի բնակավայրերի ցուցակը 1911-12ին: Ըստ այդ ցուցակի Մոկսի շրջանում կար 70 բնակավայր: Մոկս քաղաքը, որը բաղկացած էր 5 թաղերից, ունէր 672 տուն հայ եւ 640 տուն քուրդ ազգաբնակչութիւն, ինչպէս նաեւ 4-5 տուն գնչու-բոշաներ եւ 3-4 տուն թուրք պաշտօնեաներ³⁵:

Մոկսի ուղեւորութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ Օրբելու աշխարհայեացքի վրայ: Վերադառնալով Ռուսաստան, նա իր ուղեւորութեան եւ Վանի շրջանի ուրարտական յուշարձանների ուսումնասիր-

ման վերաբերեալ հանգամանալի զեկուցում կարդաց նախ Գիտութիւնների Ակադեմիայի Պատմա-Բանասիրական Բաժանմունքում 1912 Հոկտեմբերի 3ին, ապա Ռուսական Հնագիտական Ընկերութեան (ՌՀԸ) Արեւելեան Բաժանմունքի նիստում՝ 1912 Դեկտեմբերի 20ին,³⁶ նա ցուցադրեց նաեւ իր կողմից յայտնաբերուած եւ Վանի հնավաճառներից գնուած հնագիտական որոշ իրերի հաւաքածուն³⁷։

Ներկայացնելով Վանի թագաւորութեան յուշարձանների տեսութիւնը եւ մասնաւորապէս Վանի մօտակայքում գտնուող բերդում հնագիտական պեղումներ կատարելու անհրաժեշտութիւնը, Օրբելին նշում է. «այդ հրաշալի եւ ընդարձակ բերդերը, ինչպէս օրինակ Հայկաբերդը, բացարձակապէս ձեռք չեն տրուել եւրոպացի հետազօտողների կողմից եւ՝ որ պեղումներից կարելի է սպասել որոշակի արդիւնքներ»³⁸։

1915ի Յեղասպանութիւնից յետոյ, երբ Մոկսի տարածքը հայաթափուում է, Օրբելու ուսումնասիրութիւնները շուտով ձեռք են բերում յատուկ նշանակութիւն։ Նա առաջին եւ միակ հետազօտողն էր, որ տեղեկութիւններ հաւաքեց Մոկսի վերաբերեալ հենց Մոկսի տարածքում, դաշտային պայմաններում, իսկ հաւաքած նիւթերը (250 լուսաթիթեղներ-նեղատիւներ եւ 62 ձայնագրուած գլանիկներ) ձեռք բերեցին գիտական մեծ արժէք՝ քերականութեան, բառագիտութեան, հնչիւնաբանութեան, ինչպէս նաեւ ազգագրութեան ուսումնասիրման գործում։ Տարիներ անց, աւարտելով Մոկսի Հայկական Տեքստերը աշխատութեան ներածականը, Օրբելին ցաւով գրում էր, որ 1915ի Եղեռնից փրկուեցին միայն մի քանի հայ ընտանիքներ, հայերի ճակատագրից չխուսափեց նաեւ քուրդ բնակչութիւնը, որի մի մասը բնաջնջուեց, մի մասը փախուստի դիմեց եւ Մոկսը անմարդաբնակ դարձաւ. «Իսկ 1911-1912թթ. երբ եւ եղայ Մոկսում, - նշում է Օրբելին, - այնտեղ շատ մարդ էր ապրում, կեանքը աշխատանքային էր, իրաւագուրկ, ծանր, բայց եւ կեանքի փոքր ուրախութիւններից ոչ բոլորովին գուրկ։ Եւ դրա համար էլ առանձնապէս ցաւալի է գիտակցել, որ այն քիչը, որը եւ կարողացայ գրառել Մոկսում՝ եւ նիւթերի այդ փոքր ժողովածուն, եւ հայկական, եւ քրդական բառարանները հանդիսանում են հազիւ թէ ոչ վերջին վկայութիւնը հայերի եւ քրդերի, երկու ժողովուրդների մի քանի հազար զուակների լեզուի, կացութեանի, սովորութիւնների, աշխատանքի եւ ուրախութեան մասին»³⁹։

Ռուսաստան վերադառնալուց յետոյ Օրբելու ՌՀԸ Արեւելեան Բաժանմունքի 1912 Դեկտեմբերի 20ի նիստում ներկայացրած Վանի նահանգում իր գործուղման արդիւնքների զեկույցը առաջ բերեց Վանում հնագիտական նոր հետազօտութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը։

1913 Մարտի 27ին ՌՀԼի նոյն բաժանմունքում Բ. Վ. Ֆարմակովսկու գեկուցումից եւ Մառի առաջարկութիւնից յետոյ որոշուեալ է յանձնաժողով ստեղծել՝ Թոփրակ Կալէում հնագիտական պեղումները շարունակելու համար:

1914 Ապրիլին ՌՀԼի Արեւելեան Բաժանմունքում նորից քննարկուեալ է Վանում հնագիտական պեղումներ կատարելու հարցը: Մառը կարեւորելով Վանի թագաւորութեան յուշարձանների բացայայտումը՝ Ռուսաստանի հնավայրերի ուսումնասիրման համար, առաջնահերթ է համարում Վանում հնագիտական ուսումնասիրութիւնների վերսկսումը⁴⁰:

Արդէն յաջորդ՝ 1914 Ապրիլի 24ի նիստում ներկայացուեալ է Բ. Ա. Տուրաբեւի «Վանի Եւ Յարակից Շրջանների Հնութիւնների Մասին» գեկոյցը: Ըստ այդմ էլ մի փոքր ուշ՝ 1914 Նոյեմբերի 27ին որոշուեալ է Վան գործուղել Կովկասեան Ռազմաճակատի Արեւելեան Հնութիւնների Պահպանութեան ղեկավար Մառին (ղեկավար), Օրբելուն, Ի. Կնեսազնիցկուն (ճարտարապետ) եւ Արամ Վրոյրին (լուսանկարիչ): Նախատեսուեալ է նաեւ այդ նպատակով պետական գանձարանից բաց թողնել 7000 ռուբլի գումար:

Սակայն պատերազմական անբարենպաստ վիճակը պատճառ դարձաւ որ այս պեղումները յետաձգուեն մինչեւ 1916:

ՌՀԼի 1916 Մայիսի 7ի գրութիւնից պարզուեալ է, որ երբ 1915 Մայիսին ռուսական զօրքերը գրաւեցին Վանը, ակադեմիկոս Մառը եւ նրա օգնական Օրբելին թոյլտուութիւն ստացան իրենց արշաւախմբով հնագիտական պեղումներ կատարել Վանի բերդում, Վանի շրջանի Թոփրակ Կալէ, Զրմզրմ Մաղարա եւ Բոլ Դաղի/Հայկաբերդ կոչուող վայրում⁴¹: Այդ ժամանակներից էլ սկսած ուրարտերէնը դառնում է Մառի յատուկ հետազօտութիւնների առարկան:

Հնագիտական ուսումնասիրութիւնների ընթացքում յայտնաբերուեալ են մի շարք հնագիտական նիւթեր, սեպագիր ու ձեռագիր յուշարձաններ: Վանի միջնաբերդի հիւսիսային փեշին՝ «Հագինէ Կապուսի» որմնախորշում Օրբելին կատարեց հնագիտական մեծ յայտնագործութիւն եւ յայտնաբերեց 2 մետր բարձրութեամբ քարի մեծ հողակոթող՝ Սարգուրի Բ.ի 285 տողանոց տարեգրութիւնը, որն իր նշանակութեամբ եւ չափերով կարող էր համեմատուել միայն Վանի բերդի Հարաւային փեշին փորագրուած Արգիշտի Ա.ի Խորխորեան արձանագրութեան հետ⁴²: Մառը պատճէնաւորեց այն, իր հետ տարաւ Ռուսաստան եւ վերձանելուց յետոյ հրատարակեց առանձին գրքով⁴³: Այս յայտնագործութիւնը մեծ փառք բերեց ռուսական հնագիտական դպրոցին: Միաժամանակ արձանագրութեան վերջին տողի տակ յայտնաբերուեցին նաեւ ինչ-որ տառեր: Ոչ-մեծ հետախուզական աշխատանքներից յետոյ պար-

զուեց, որ հանելուկային այդ տառերը պատկանում էին հայկական արձանագրութեանը⁴⁴ :

Հնագիտական ուսումնասիրութիւնները շարունակուեցին նաեւ յետագայում :

Հնագիտական արշաւախումբը Մառի գլխաւորութեամբ 1916 Յունիսի 11-Յուլիսի 16ը պեղումներ կատարեց Թոփրակ կալէում, իսկ Յունիսի 22-Յուլիսի 16ը՝ Օրբելու գլխաւորութեամբ՝ Վանի բերդում⁴⁵ :

1915-1916ին Կովկասեան Թանգարանի տնօրէն գնդապետ Ա. Ն. Կազնակովը թոյլտուութիւն է ստանում հնագիտական պեղումներ եւ գիտա-թանգարանային հետազօտութիւններ կատարել Թուրքիայից պատերազմի իրաւունքով գրաւուած շրջաններում : Նա Թիֆլիսի Կովկասեան Թանգարան է հասցնում ոչ միայն լուսանկարներ եւ քանդակադրոշմներ, այլեւ սեպագիր 25 արձանագրութիւններ, որոնցից 18ը՝ Վան-Վասպուրականից, այդ թւում՝ 3ը՝ Չեւստան (Մփստանից) (Իշպուլինի), 8ը՝ Վանից (5ը՝ Մենուայի, 2ը՝ Արգիշտի Ա.ի, 1ը՝ Ռուսա Ա.ի), 1ը՝ Վարազից (Մենուայի), 4ը՝ Սղգայից (Մենուայի), 1ը՝ Կարմրաւոր վանքից (Մենուայի), 1ը՝ Թութանից (կեղծ արձանագրութիւն) : Փրկւում եւ Թիֆլիս է տեղափոխուում նաեւ Վանից յայտնաբերուած ուրարտական թագաւորի արձանիկ եւ մի երկան (Յրադացքար)՝ ընդհանուր առմամբ 20 միւսոր⁴⁶ : Կազնակովի լուսանկարներն իրականացուում էին Բ. Շախովսկու կողմից, որոնք 1917ին ամբողջութեամբ փոխանցուում են Մոսկուայի Հնագիտական Ընկերութեանը⁴⁷ :

Վանի թագաւորութեան յուշարձաններ էր լուսանկարում նաեւ Ա. Վ. Լեազովը, որը 1916ին ուղեկցում էր Ա. Ա. Բորրինսկուն⁴⁸ : Վերջինիս լուսանկարները (Մենուայի արձանագրութիւնը Վարազից, Մենուայի արձանագրութիւնը Աղթամարից, Իշպուլինի եւ Մենուայի արձանագրութիւնը Աղթամարից, քարէ սալիկների արձանագրութիւնը Հայկաբերդից եւն.) յետագայում տպագրուեցին Մառի աշխատութեան յաւելուածում⁴⁹ :

Ռ. Հ. Լի կողմից ակադեմիկոս Մառի անմիջական ղեկավարութեամբ հնագիտական հետազօտութիւններ (պեղումներ, նկարագրութիւն, յատակագծում, լուսանկարում, ճարտարապետական յուշարձանների, ամբողջների, քարանձաւների, ստորգետնեայ անձաւների, դամբարանների, արձանագրութիւնների եւն.-ի ուսումնասիրութիւններ եւ հաւաքում) էր կատարում նաեւ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Ասիական Թանգարանի տնօրէն-գիտնական, հայ նշանաւոր հայագէտ, հնագէտ եւ պատմաբան Անդրանիկի գրագիր՝ Աշխարհբէկ Անդրէեւիչ (Աղալոյի) Լորիս-Մելիք-Քալանթարը (1884-1942)⁵⁰ :

Դեռեւս 1915ին Քալանթարը մեծ ջանքեր էր գործադրել եւ թոյլտուութիւն ստացել մասնակցել Անդրանիկ Օզանեանի հայ կամաւորական

գնդի ռազմական գործողութիւններին⁵¹։ Մարտերի միջակայքում Քալանթարը հնարաւորութիւն է ունենում ուսումնասիրել ճանապարհի մօտակայքում գտնուող հայկական պատմական յուշարձանները։ Մառին ուղղուած նրա 1915 Մայիսի 12ի նամակում կարդում ենք. «Ամսի երեքին անցանք Վանք գիւղով, որտեղ գտնուում է Ս. Բարդուղիմէոսի վանքը։ Շինութեան ոճը VII-VIII դարերի է, մուտքը՝ IX-X դարերի։ Եկեղեցու յատակագիծը խաչանման է, արձանագրութիւնները՝ բացառապէս ուշ դարերի, կան հետաքրքիր զարդաքանդակներ։ Կը գրեմ մանրամասն»⁵²։

Ըստ ականատեսների վկայութիւնների, մի իրադէպի ընթացքում Անդրանիկը փրկում է գիտնականի կեանքը⁵³։ 1915 Ապրիլին ռուսական զօրքերը եւ հայ կամաւորները գտնուում էին Խոյից հարաւ։ Յանկարծ լուր է ստացւում, թէ Աշխարհբէկ Քալանթարը, գեներալ Չերնոզուբովի հրամանով ձերբակալուել է եւ պէտք է գնդակահարուի՝ ռազմական գծից դուրս ուսումնասիրութիւններ կատարելու համար։ Գեներալ Նազարբեկովի եւ ուրիշների միջնորդութիւնները՝ գիտնականին ազատ արձակելու վերաբերեալ, որեւէ արդիւնք չէին տուել։ Միայն Անդրանիկի խելամիտ միջամտութիւնից յետոյ նա ազատ է արձակուում։ Ցետապայ արշաւանքների ընթացքում գեներալներ Չերնոզուբովը, Նազարբեկեանը եւ Անդրանիկը ժամանակ էին գտնում գրուցելու Քալանթարի հետ պատմութեան եւ պատմական յուշարձանների մասին⁵⁴։

1917 Յունիսի 22ին Քալանթարը թոյլտուութիւն է ստանում Մառի անմիջական ղեկավարութեամբ մասնակցել Ռուսաստանի Կայսերական Ակադեմիայի Ռ-ՀԼի կողմից կազմակերպուած Վանի երկրորդ հնագիտական արշաւախմբին, որը պեղումներ է կատարում Վանում՝ Թոփրակ Կալէում եւ Բոլղաղ լեռան⁵⁵ վրայ գտնուող Հայկաբերդում։ Նրան յաջողում է յայտնաբերել եւ ուսումնասիրել ուրարտական սեպագիր որոշ արձանագրութիւններ, որոնց մի մասը նա փրկում եւ իր հետ բերում է Արեւելեան Հայաստան⁵⁶։

Քալանթարը ուսումնասիրում, լուսանկարում, պատճենահանում է շուրջ 50 ուրարտական սեպագիր արձանագրութիւններ, որոնցից 10ը՝ նորայայտ⁵⁷։ Այդ մասին նա Թիֆլիս հասնելուն պէս հեռագրում է Մառին՝ Սանկտ Պետերբուրգ. «Շտապում եմ, գոնէ հեռագրային համառօտութեամբ տեղեկացնել, որ մեր արշաւախումբը, բարեյաջող աւարտելով իր աշխատանքները, երէկ՝ Օգոստոսի 29ին ժամանեց Թիֆլիս։ Ծրագիրը հնարաւորինս կատարուել է ամբողջութեամբ։ Շրջագայել եւ հանգամանօրէն հետազօտել ենք Վանի շրջանը (քաղաքը, միջնաբերդի մերձակայքը, Արձակը, Թիմարը, Բերկրին եւ Բայազետը)։ Հաւաքուել է մեծ քանակութեամբ նիւթ՝ 250 լուսաթիթեղներ»⁵⁸։

1916ին էջմիածնից հրգրում եւ Մուշ է ուղեւորում նաեւ Նիկողոսյոս Ադոնցը, որը 1917ին միանում է ՌՀԸին եւ մասնակցում Վանի Հնագիտական արշաւախմբի կազմակերպած պեղումներին⁶⁰ :

Վանի 1915ի գրաւումից անմիջապէս յետոյ ռուսական բանակը ձեռնամուխ է լինում նաեւ փրկելու պատմական եւ Հնագիտական կարեւոր յուշարձանները: Այսպէս, ռուսական կովկասեան բանակի շտաբը յատուկ գրութեամբ տեղեկացնում է գեներալ Չերնոզուբովին, որ Ուշնուէ-Շէլխան-Ռեւանդուզ ճանապարհին Քելիշինի լեռնանցքում յայտնարերուել է քարէ Հնագոյն մի յուշարձան՝ սեպագիր արձանագրութեամբ, որը Հնագիտական արժէք է ներկայացնում եւ որը թուագրում էր Ք.ա. Թ. դ.: Գերմանացիները փորձել էին այդ յուշարձանը տեղափոխել եւրոպական որեւէ թանգարան: Սակայն կովկասեան Բանակի գլխաւոր հրամանատարը հրամայում է, որ ձեռնարկուեն բոլոր միջոցները, որպէսզի այդ յուշարձանը չյայտնուի Բեռլինում, այլ անմնաս եւ մեծ հոգատարութեամբ հասցուի Թիֆլիս, որտեղից էլ այն տեղափոխուի Ռուսաստանի որեւէ գիտական հաստատութիւն⁶⁰ :

Կովկասեան ճակատի շտաբի պետ գեներալ Բոլխովիտինովին ուղարկած իր պատասխան հեռագրում գեներալ Չերնոզուբովը տեղեկացնում էր, որ Քելիշին-Ուշնուէի լեռնանցքում 1365 սաժէն⁶¹ բարձրութեան վրայ իրօք գտնուում է Վանի թագաւորութեան գահակալ Իշպուհինի Ք.ա. Թ. դ. կառուցած յուշարձանը՝ խալդական կամ ասորական գրութեամբ: Նոյն Չերնոզուբովի վկայութեամբ մէկ այլ յուշարձան էլ յայտնարերուել էր Միդեկից ոչ հեռու՝ Թալաւուզում, որը կանգնեցրել էր Ռուսա Ա.ն՝ Ք.ա. 714ին: Չեռնոզուբովը յայտնում էր նաեւ, որ դէպի յուշարձաններ տանող կաժանները դժուարանցանելի են եւ հենց առաջին հնարաւորութեան դէպքում՝ մասնաւորապէս Ապրիլի վերջերին, կարգադրութիւնը ի կատար կ'ածուի եւ 30-40 փութ⁶² քաշ ունեցող սեպագիր արձանագրութեան յուշարձանը կը տեղափոխուի⁶³ :

Միաժամանակ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի լուսանկարիչ Ն. Կ. Գլուկէին յանձնարարուում է կովկասեան բանակի գործողութիւնների վայրերում կատարել հնութիւնների եւ արուեստի յուշարձանների հաւաքում եւ պահպանում⁶⁴ :

Ա. Ա. Ծլորենսկին, բացի լուսանկարներից Մոսկուա հասցրեց Վանի չրջանի Լեսկ գիւղից յայտնարեբուած սեպագիր մի արձանագրութիւն, որն այժմ պահպանուում է Ռուսաստանի Դաշնութեան Ալեքսանդր Ս. Պուշկինի անուան Կերպարուեստի Պետական Թանգարանում⁶⁵ :

Բացի դրանից, Ռուսական Թանգարանի Ազգագրութեան Բաժնի վարիչ Ա. Ա. Միլէրի ղեկավարութեամբ, որի օգնականն էր Պողոս Մակինցեանը, կազմակերպուեց նաեւ ազգագրական արշաւախումբ⁶⁶ դէպի Վան:

Վասպուրականի 1915 յուլիսեան գաղթի ժամանակ, մեծ չափով վնասուում են վանքերի եւ եկեղեցիների թանկարժէք եկեղեցական անօթները, իրերն ու ձեռագրերը, իսկ մի մասն էլ թալանուում են ու ոչնչացուում: Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ որոշուում է արժէքաւոր իրերը եւ ձեռագրերը փոխադրել էջմիածին:

Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան իսկական անդամ, Պատմութեան եւ Ազգաբանութեան Հայկական Ընկերութեան Հիմնադիր անդամ եւ գիտական-քարտուղար, Կովկասեան Թանգարանի Հնագիտութեան Բաժնի աւագ թանգարանապահ Սմբատ Վ. Տէր-Աւետիսեանը⁶⁷ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի յանձնարարութեամբ 1916 Ապրիլին Պետրոգրադից գործուղուում է Կովկասեան ճակատ՝ մշակութային յուշարձանների, մասնաւորապէս սայաքարէ արձանագրութիւնների հաշուառման եւ պահպանման համար⁶⁸:

Վեհափառի գիւանապետին ուղղուած նամակում նա գրում է. «Գիտութեան ճեմարանի որոշման համաձայն եւ Տ. Փոխարքայի հրամանով երկու օրից ճանապարհուելու եմ Կովկասեան պատերազմաբեմը, առանձնապէս Վանի շրջանը, յատուկ հրահանգ ունենալով գեկուցագիր կազմել պատմական-կուլտուրական յիշատակարանների վիճակի եւ այն մասին, թէ ինչքան նորա վնասուել են ու անբուել ներկայ պատերազմի ժամանակ, տեղնուտեղը կարգադրել նոցա պահպանութեան մասին եւ միջոցներ ձեռք առնել այդ յիշատակարանների գոյութիւնը ապահովելու համար»⁶⁹:

Կաթողիկոսի կարգադրութեամբ Հնագիտական Հետազօտութիւնների եւ որոնումների ժամանակ եկեղեցու ներկայացուցիչ է նշանակուում Լիմ անապատի վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանը: Նախատեսուում է, ցուցակագրել, կնքել-ապահովել՝ գտնուած Հնագիտական իրերը, ձեռագրերը, եկեղեցական-Հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը, եւ իրերի ցուցակի հետ տեղափոխել էջմիածին եւ ոչ թէ Թիֆլիս⁷⁰: Յովհաննէս վարդապետ Հիւսեանի անմիջական ջանքերով անխուսափելի կորստից փրկուեցին եւ Կովկաս փոխադրուեցին երկու տասնեակից աւելի սեպագիր արձանագրութիւններ, շուրջ 1300-1400 ձեռագիր մատեաններ, Մշոյ Առաքելոց վանքի դուռը եւն.:

Այսպիսով, երիտթուրքական 1908ի յեղաշրջման եւ հռչակուած օսմանեան սահմանադրութեան բարենպաստ պայմանների հետեւանքով, ինչպէս նաեւ Ա. Աշխարհամարտի ընթացքում ռուսական յառաջադացքի շնորհիւ 1910-1917ին հնարաւորութիւններ ընձեռուեցին պատմահնագիտական, ազգագրական եւ բանասիրական հետազօտութիւններ կատարելու Վանի նահանգի տարածքում, որոնց արդիւնքները յետագայում ձեռք բերեցին գիտական մեծ արժէք:

- ¹ Ընկերութիւնը հիմնադրուել է 1906ին թիֆլիսում՝ ազգագրագէտ Երուանդ Լալայեանի նախաձեռնութեամբ: Իր գոյութեան շուրջ 10 տարիների ընթացքում Ընկերութիւնը կազմակերպել է գիտական եւ հնագիտական արշաւախմբեր Անդրկովկասում եւ Արեւմտեան Հայաստանում: Ընկերութեան կողմից հրատարակուել է Ազգագրական Հանդէս ամսագիրը:
- ² Ա. Ե. Սամուէլեան, «Երուանդ Լալայեան», *Էջմիածին*, թիւ 12, 1964, էջ 7:
- ³ Համարձոււմ Երամեան, *Յուշարձան, Հար. Բ.*, Աղեքսանդրիա, Տպագր. Արամ Ստեփանեան, 1929, էջ 137:
- ⁴ Հայաստանի Ազգային Արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), Փօնդ 27, ցուցակ 1, գործ 160, թերթ 42:
- ⁵ Կառլէնէ Չաչանի, *Հայ Մտաւորականութեան Դերը Քրդական Մշակութի Զարգացման Գործում*, Երեւան, 1987, էջ 14:
- ⁶ Երուանդ Լալայեան, «Վասպուրականի Նշանաւոր Վանքեր» եւ «Վասպուրականի Բանահիւսութիւնից», *Ազգագրական Հանդէս, Տասնչորսերորդ Տարի, Գիրք 22*, No. 1, 1912, թիֆլիս, 1912. նաեւ՝ «Վասպուրականի Ասորիները» եւ «Վասպուրականի Բանաւոր Գրականութիւնից», *Ազգագրական Հանդէս, Գիրք 24*, No. 1, 1913, թիֆլիս, 1913. նաեւ՝ «Վասպուրականի Բանահիւսութիւնից» եւ «Տնայնագործութիւնը Վասպուրականում» եւ «Վասպուրական. Հաւատք», *Ազգագրական Հանդէս, Տասնուհինգերորդ Տարի, Գիրք 25*, No. 2, 1913, թիֆլիս, 1914. նաեւ՝ Արտաշէս Մ. Նազինեան, «Երուանդ Լալայեանը Բանահաւաք-Բանագէտ», *Հայկական ՍՍԲ Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր, Հասարակական Գիտութիւններ*, 1965, թիւ 8, էջ 65:
- ⁷ Կարապետ Վ. Մելիք-Փաշայեան, «Երուանդ Լալայեան (ծննդեան 100ամեակի առթիւ)», *Պատմաքանասիրական Հանդէս*, թիւ 3(26), 1964, էջ 34:
- ⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 26:
- ⁹ ՀԱԱ, ֆ. 53, գ. 45, թ. 1:
- ¹⁰ ՀԱԱ, ֆ. 53, գ. 45, թ. 2:
- ¹¹ Սամուէլեան, էջ 7:
- ¹² "Iz vlechenie iz Protokolov Zasedanii Akademii. Istoriko-Filologicheskoe Otdelenie. Zasedanie 22 Sentyabrya 1910 g." (Քաղուածք Ակադեմիայի նիստի արձանագրութիւնից: Պատմաքանասիրական Բաժանմունք. 1910 Սեպտեմբերի 22ի նիստ), *Izvestiya Akademii Nauk (Գիտութիւնների Ակադեմիայի տեղեկագիր)*, 1910, էջ 1411-1412. նաեւ՝ Կարէն Ն. Իւզրաշեան, *Ակադեմիկոս Յովսէֆ Ազգարի Օրբելի*, Երեւան, 1971, էջ 35:
- ¹³ Իւզրաշեան, էջ 34:
- ¹⁴ Նոյն, էջ 35:
- ¹⁵ I. V. Megreldize, *Iosif Orbeli*, թիֆլիսի, 1987, էջ 29:
- ¹⁶ Նոյն, էջ 157-158:
- ¹⁷ I. Orbeli, "Predvaritelnyy Otchet O Komandirovke V Aziatskuyu Turtsiyu V 1911-1912 gg.", Petrograd, 1912" (Նախնական հաշուետուութիւն 1911-1912ի Ասիական Թուրքիա գործուղման վերաբերեալ, Պետերբուրգ, 1912), *Izvestiya Akademii Nauk (Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր)*, 1912, պրակ VI, թիւ 15, էջ 918:
- ¹⁸ *Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Մննդեան 140 Եւ Մահուան 70ամեակների Տարիկցի Ժողովածու*, խմբ. Պարույր Մ. Մուրադեան, Երեւան, 2005, էջ 93:
- ¹⁹ Մ. Հ. Մուրադեան, *Շատախի Բազրաուր*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1962, էջ 28-64:
- ²⁰ I. A. Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh Tomakh (Ընտիր երկեր երկու հատորով)*, Հար. 2, Երեւան, 2002, էջ 197-358:

- ²¹ Նոյն, էջ XII:
- ²² *Կովկասի Հրաբեր, Թրֆլիս*, 29.12.1912. *Նաև*: Orbeli, "Predvaritelny...", էջ 922-923:
- ²³ I. A. Orbeli, *Izbrannie Trudi (Ընտիր երկեր)*, Երևան, 1963, էջ XVII:
- ²⁴ N. Marr, *Materiali Po Kholdskoy Epigrafii Iz Komandirovki I. A. Orbeli V Turetskiyu Armeniyu (Նիւթեր Յ. Ա. Օրբելիի՝ Թուրքահայաստան կատարած գործուղման խաղաղական արձանագրութիւնների)*, ZVO, Հար. XXIV, Պետրոգրադ, 1917, էջ 97-124:
- ²⁵ *Տե՛ս՝ աւելի ետք:*
- ²⁶ Իւզրաշեան, էջ 37:
- ²⁷ *Ռուսական Կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ (Ռուսաստանի Դաշնութիւն), «Կ. Պոլսի դեսպանութիւն»*, 1912, գ. 1603, թ. 84-85:
- ²⁸ K. N. Yuzbashyan, *Akademik Iosif Abgarovich Orbeli (Ակադեմիկոս Յոսէֆի Արզարի Օրբելի)*, Մոսկուա, 1964, էջ 33:
- ²⁹ Իւզրաշեան, էջ 38:
- ³⁰ Չաչանի, էջ 14-15:
- ³¹ Orbeli, *Izbrannie Trudi*, էջ 188-195. *Նաև*: Yuzbashyan, էջ 30-35, I. A. Orbeli, *Folklor I Bit Moksa (Մոկսի ազգագրութիւնը եւ կենցաղը)*, Մոսկուա, 1982, էջ 3-8:
- ³² Չաչանի, էջ 117:
- ³³ Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh, Հար. Բ.*, էջ XV:
- ³⁴ Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh, Հար. Ա.*, Մոսկուա, 1968:
- ³⁵ Orbeli, *Folklor*, էջ 3, 136:
- ³⁶ Orbeli, "Predvaritelny":
- ³⁷ Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh, Հար. Ա.*, էջ 1, 10. *Նաև*: N. Marr, *Materiali*, էջ 97. *Նաև*: Orbeli, "Predvaritelny", էջ 917-926:
- ³⁸ N. Marr, I. Orbeli, *Arkheologicheskaya Ekspeditsiya 1916 Goda V Van, Raskopki Dvukh Nish Na Vanskoy Skale I Nadpisi Sardura Vtorogo Iz Raskopok Zapadnoy Nishi (1916ին Վան կատարուած հնագիտական արշաւախումբը, Վանի ժայռի երկու խորշերի պեղումները եւ Սարգուրի Բ.ի արձանագրութիւնները արեւմտեան խորշից)*, Պետերբուրգ, 1922, էջ 1:
- ³⁹ Orbeli, *Folklor*, էջ 3. *Նաև*: Իւզրաշեան, էջ 39-40:
- ⁴⁰ B. B. Piotrovskii, *Arkheologiya Zakavkazyia (Անդրկովկասի հնագիտութիւն)*, Լենինգրադ, 1949, էջ 9:
- ⁴¹ *Ռուսական Կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ (Ռուսաստանի Դաշնութիւն), Ք. 2100, ց. 1, գ. 335, թ. 112. Նաև*: Քաղաքացի, *Թրֆլիս*, 11.09.1916, *Նաև*: Piotrovskii, *Arkheologiya*, էջ 9. *Նաև*: Աշոտ Արզումանեան, *Օրբելի Նորայրներ, Քիրք Աւաջին, Թարթուս*, Երևան, 1986, էջ 517:
- ⁴² Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh, Հար. Ա.*, էջ 10:
- ⁴³ Հրաչեայ Աճառեան, «Մառը Եւ հայագիտութիւնը», *Գրական Թերթ*, 2.04.1965. *Նաև*: *Նիկողայոս Եսկոյիլիլի Մառ (Ծննդեան 100-ամեակի Առթիւ)*, Երևան, ՀՍՄԻ ԳԱ Հրատ., 1965, էջ 57:
- ⁴⁴ Իւզրաշեան, էջ 54:
- ⁴⁵ N. Marr, I. Orbeli, էջ 1-3:
- ⁴⁶ I. I. Meshchaninov, *Khaldovedenie (Պարդաղիտութիւն)*, Բաքու, 1927, էջ 208. *Նաև*: G. V. Tsereteli, *Urartskie Pamyatniki Muzeya Gruzii (Վրաստանի Թանգարանի ուրարտական յուշարձանները)*, *Թրֆլիսի*, 1939, էջ 33-41, 45-52, 60-64:
- ⁴⁷ I. I. Meshchaninov, *Die Neuen Ergebnisse Der Chaldischen Forschungen. Archiv Für Orientforschung*, 1931, VI, Heft 4/5, էջ 204. *Նաև*: Tsereteli, էջ 12. *Նաև*: B. B. Piotrovskii, *Vanskoe Tsarstvo (Urartu) (Վանի թագաւորութիւնը. Ուրարտու)*, Մոսկուա, 1959, էջ 15:

- ⁴⁸ Piotrovskii, Vanskoe, էջ 15:
- ⁴⁹ N. Marr, *Materiali Po Kholdskoy Epigrafii Iz Komandirovki*, էջ 97-124:
- ⁵⁰ Աշխարհբեկ Քալանթար, «Հայաստան, Քարէ Դարից Միջնադար», *Երկերի Ժողովածու*, Երևան, 2007, էջ 31-34:
- ⁵¹ Զորավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը 1914-1917, Օրագրութեան Զորավարին Քիվնապահ Զինուորէն, «Պաշար», Պոսթոն, 1924, էջ 30:
- ⁵² Քալանթար, «Հայաստան», էջ 17:
- ⁵³ Վ. Յովհաննիսեան, *Դժուարին Տարիներ. Յուշեր*, Երևան, «Հայաստան», 1988:
- ⁵⁴ Զորավար Անդրանիկի Կովկասեան, էջ 30:
- ⁵⁵ Այն գտնուում է Հայկական Տարուսի արեւելեան կողմում, Սոչար գետի հովտում: Նիկողայոս Ազոնցը ենթադրարար այն նոյնացնում է Կիշտէիր լեռան հետ:
- ⁵⁶ Բարկէն Ն. Առաքելեան, «Աշխարհբեկ Քալանթար (Մենդեան 100ամեակի Առթիւ)», *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 3 (106), 1984, էջ 3:
- ⁵⁷ Աշխարհբեկ Քալանթարի սեպագիր արձանագրութիւնների ապակեայ լուսաթիթեղների (նեգատիւների) հաւաքածուն յայտնի է եղել մասնագէտների շրջանում, օգտագործուել նշանաւոր ուրարտագէտ Իւան Մեշչանինովի կողմից եւ որոշ հրատարակութիւններում: Յաւօք, այդ հաւաքածուի միայն չնչին մասն է փրկուել: Գիտնականի ձեռքակալումից յետոյ նրա այլին՝ Թամարան, դրանք յանձնել է Երևանի Պատմութեան Թանգարանին (Քալանթար, *Երկերի Ժողովածու...*, էջ 17):
- ⁵⁸ Յաւօք Քալանթարի կողմից հրատարակութեան պատրաստած Վանի արշաւախմբի նիւթերը ոչնչանում են Նեւայի 1924ի վարարման ժամանակ Լենինգրադի Ակադեմիայի տպարանում (Քալանթար, «Հայաստան», էջ 18):
- ⁵⁹ Կարէն Ն. Իւզրաչեան, «Նիկողայոս Ազոնցի Գիտական Ժառանգութիւնը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1962, թիւ 4(19), էջ 117:
- ⁶⁰ Ռուսական Կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, Ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 2-3:
- ⁶¹ Երկարութեան հին ռուսական չափ. 1 սաժէնը=2,134 մետր:
- ⁶² Մանրութեան ռուսական միաւոր. 1 փութը=16,3 կգ:
- ⁶³ Ռուսական Կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, Ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 5:
- ⁶⁴ Նոյն, թ. 15:
- ⁶⁵ N. Ya. Marr, "Khaldskaya Klonoobraznaya Nadpis Iz Sela Leska Vanskogo Okrug" (Սաղական սեպագիր արձանագրութիւն Վանի շրջանի Լեսկ գիւղից), *Izvestiya Akademii Nauk*, 1915, էջ 1731-1733:
- ⁶⁶ Ռուսական Կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, Ֆ. 2100, ց. 1, գ. 335, թ. 3-35:
- ⁶⁷ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արխիւ, Ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 6:
- ⁶⁸ Նոյն, Ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 1-12. նաեւ՝ Marr, Orbeii, էջ 3:
- ⁶⁹ Արտաքին, էջմիածին, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1915, էջ 861:
- ⁷⁰ Նոյն, էջ 861-862:

HISTORICAL-ARCHAEOLOGICAL, ETHNOGRAPHICAL AND PHILOLOGICAL
EXPLORATIONS IN VAN-VASPOURAKAN DURING 1910-1917

(Summary)

AVETIS HARUTUNYAN

The article is based on the archive documents, periodical press and historical literature that elucidate the historical-archaeological, ethnographical and philological explorations in Van-Vaspourakan during 1910-1917.

This field work included the exploration of the citadel of Van, Toprak Kala, and Haykaber, and the study of the newly found cuneiform inscriptions, the dialect of Moks and the customs and traditions of the Kurds of the region.

This scientific research was conducted by well-known experts of both Armenian and Oriental studies, such as Yervand Lalayan, Hovsep Orbeli, Nicholai Marr, Ashkharbek Kalantar, Nikolai Adonts and others.